ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

04.09.2013թ.
209-9

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային
ոստիկանության պետ
պարոն Արսեն Գալստյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

2013թ.-ի օգոստոսի 15-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր թիվ 206-ի 4 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել Երեւան քաղաքում տեղադրված տեսախցիկներից մեկի՝ 30.06.2013թ.-ին կատարած տեսագրության հատված: Ի պատասխան՝ ՀՀ ՃՈ-ից ստացվել է գրություն, ըստ որի՝ խնդրված տեսագրությունը տրամադրել հնարավոր չէ, քանի որ Երեւան քաղաքում տեղադրված տեսախցիկների տեսագրությունները արխիվում պահվում են առավելագույնը 48 ժամ:

“Տեսանկարանահող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ “Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների եւ իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում: Իրավախախտման հատկանիշները պարզվում են 7-օրյա ժամկետում”: Այսպես, թեեւ օրենքը իրավախախտման հատկանիշները պարզելու համար սահմանում է 7-օրյա ժամկետ, սակայն ըստ ՃՈ գրությանը՝ տեսագրությունները պահպանվում են առավելագույնը 48 ժամ: Ակնհայտ է, որ http://offense.roadpolice.am/ կայքում տեղադրված տեսանյութերն ամբողջական չեն, չեն ներառում ենթադրյալ իրավախախտման ամբողջ ընթացքը:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները

1. Եթե քաղաքում տեղադրված տեսախցիկների տեսագրությունները պահվում են առավելագույնը 48 ժամ, ապա ինչպե՞ս՝ տեխնիկական եւ իրավական ի՞նչ մեխանիզմով (ընթացակարգով) է ՃՈ-ն իրականացնում օրենքով 7-օրյա ժամկետում կատարման ենթակա՝ իրավախախտման հատկանիշները պարզելու գործառույթը:
2. Ո՞րն է Երեւան քաղաքում տեղադրված տեսախցիկների տեսագրությունները արխիվում առավելագույնը 48 ժամ պահելու իրավական հիմքը, ո՞ր իրավական

ակտով (ակտերով) են սահմանված Երեւան քաղաքում տեղադրված տեսախցիկների տեսագրությունները արխիվավորելու, դրանք պահելու եւ/կամ դրանք վերացնելու պայմանները եւ ժամկետները,

3. Խնդրում ենք նաեւ տրամադրել այդ իրավական ակտերի պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իավաբան Գեւորգ Հայրապետյան